ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Արմինե Վարդանի Գևորգյանի «Ներդրումների ներգրավման հիմնախնդիրները հետպատերազմյան Հայաստանում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված՝ Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

1. Ատենախոսության թեմայի արդիականությունը

Հայաստանի Հանրապետությունում անկախությունից ի վեր կարևորվել է երկրի ներդրումային գրավչության բարձրացման հիմնախնդիրը, որը մշտապես սրվում էր տարբեր հանգամանքների պատճառով. ատրաքին տնտեսական կապերի կազմալուծում, ավերիչ երկրաշարժ, պատերազմներ (1988-1994թ.-ի, քառօրյա, 44-օրյա), վերջին տարիների սահմանային լարվածությունը, ինչի արդյունքում բարձրանում են ներդրումներ կատարելու ռիսկերն ու անորոշությունները:

Միևնույն ժամանակ, պետության կողմից ամբողջական պահանջարկի կառավարման հնարավորությունները շատ փոքր են և գործնականում սահմանափակվում են պետական գնումներով: Այնինչ ամբողջական պահանջարկի կառավարման հզոր մեխանիզմ է տնային տնտեսությունների վերջնական սպառման և ձեռնարկությունների ներդրումային պահանջարկի վրա ազդեցությունը:

Ժամանակակից աշխարհում տնտեսության զարգացման հիմնարար գործոններից մեկը գիտակա-տեխնիկական գործունեությունն է և դրանով պայմանավորված ներդրումները, ինչը կարևոր դեր է խաղում համաշխարհային տնտեսության զարգացման ներկա փուլում և հանդիսանում է սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործման և ժամանակակից տարբեր տնտեսական մոդելների օպտիմալացման կարևորագույն գործոն, որոնք իրենց հերթին պետք է հիմք հանդիսանան պետության կողմից երկարաժամկետ ծրագրեր մշակելիս:

Միջազգային փորձը վկայում է, որ ճգնաժամային իրավիճակում հայտնված և հատկապես փոքր տնտեսություն ունեցող երկրները սովորաբար ներքին ֆինանսական ռեսուրսների սակավության պատճառով ավելի արագ տնտեսական աճ կարողանում են ապահովել օտարերկրյա ներդրումների ներգրավման շնորհիվ: Օտարերկրյա ներդրումների ներգրավումը բերում է թե՛ դրական և թե՛ բացասական հետևանքների: Եվ յուրաքանչյուր երկրի կառավարություն օտարերկրյա ներդրումներին առնչվող բացասական երևույթներից հատկապես պետք է կարևորի

այն դրսևորումը, որ կգա ժամանակ, երբ տվյալ ներդրումը սեփականատիրոջը մեծ եկամուտներ ապահովալու արդյունքում կհանդիսանա երկրից ֆինանսական ռեսուրսների արտահոսքի աղբյուր: Ասվածը բավականաչափ տիպական է նաև Հայաստանի Հանրապետության համար: Այս ամենը արդիական և պահանջված են դարձնում ուսումնասիրությունը:

2. Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսության հիմնական նպատակն է վերլուծել ներդրումների ներգրավման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում և առաջարկել երկրի ներդրումային գրավչության աճին ուղղված քայլեր՝ ինչպես ներդրումային գրավչություն ունեցող ոլորտների բացահայտման, այնպես էլ ներդրումային քաղաքականության գործիքակազմի մշակման միջոցով:

Հետազոտության նպատակից բխում են ատենախոսի առաջադրված խնդիրները, որոնք հետևյալն են.

✓ քննարկել ներդրումարի ներգրավման հիմնական տեսությունները՝ ներկայացնելով դրանց օրինաչափություններն ու բացթողումները,

✓ մասնագիտական գրականության և տարբեր հեղինակների կողմից կատարված հետազոտությունների համադրման արդյունքում վեր հանել ներդրումային միջավայրի ձևավորման և ներդրումների ներգրավման վրա ազդող հիմնական գործոնները,

✓ համեմատական վերլուծություն իրականացնել Հայաստանի, հարևան և ԵԱՏՄ երկրների ներդրումային միջավայրերի համար՝ բացահայտելով ՀՀ ներդրումային դաշտի թերությունները,

✓ վերլուծել ՀՀ-ում ՕՈՒՆ դինամիկան և կառուցվածքը՝ բացահայտելու համար առկա խնդիրները,

✓ էկոնոմետրիկ հաշվարկների միջոցով հաշվարկել ՕՈՒՆ ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա և պարզել ՕՈՒՆ և ՀՆԱ-ի միջև պատճառական կապի առկայությունը կամ բացակայությունը,

✓ բացահայտել ՀՀ տնտեսության ներդրումային գրավչություն ունեցող ոլորտները, ինչպես նաև վերլուծել ՀՀ-ում վարվող ներդրումային քաղաքականությունը՝ վեր հանելով առկա սխալներն ու բացթողումները,

✓ մշակել ՀՀ ներդրումների ներգրավմանն ուղղված ռազմավարական քայլերի համախումբ, որը կներառի արձանագրված խնդիրների լուծման գործիքակազմը:

3. Հետազոտությունում ստացված արդյունքները և ատենախոսության գիտական նորույթը

Ատենախոսությունը ՀՀ տնտեսության և ներդրումային առավելագույն գրավչություն ունեցող ոլորտների բացահայտմանը, ներդրումային քաղաքականության գործիքակազմի ուսումնասիրությանը նվիրված հետազոտություն է, որի գիտական նորույթն ամփոփված է հետևյալ արդյունքներում.

1. Բազմագործոն ռեգրեսիոն էկոնոմետրիկ մոդելների կիրառմամբ բացահայտվել է Հայաստանի Հանրապետությունում ՕՈՒՆ-երի ազդեցության գործակիցը ՀՆԱ-ի աճի ձեռքբերման գործում, ինչպես նաև ցույց է տրվել ՕՈՒՆ-երի և ՀՀ ՀՆԱ-ի միջև առկա պատճառական կապը: Ըստ այդմ՝ տվյալ ժամանակահատվածում ՕՈՒՆ ներհոսքի փոփոխությունը պատճառ է հանդիսանում հետագա 6 ամիսների ընթացքում ՀՆԱ-ի փոփոխության, իսկ տվյալ ժամանակահատվածում ՕՈՒՆ-ի միավոր աճը նպաստում է ՀՀ ՀՆԱ-ի աճին 1,56 միավորով:

2. Մշակվել են հետպատերազմյան Հայաստանում ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ ռազմավարական քայլեր, որոնք բաղկացած են 3 համախմբից՝ 1.մեթոդական գործիքակազմ, որը պետք է հաշվի առնվի ՀՀ ներդրումների ներգրավման ռազմավարություն մշակելիս, 2. ներկայում ՀՀ-ում ներդրումային քաղաքականության իրականացման ընթացքում թույլ տված սխալների և թերացումների շտկմանն ուղղված գործիքակազմ, 3. մասնագիտական գրականության և տարբեր հեղինակների կողմից կատարված վերլուծությունների համադրման արդյունքում վեր հանված ներդրումային գրավչության վրա ազդող 30 գործոններից բաղկացած համախմբի այն գործոնների շտկմանն ուղղված գործիքակազմ, որոնց մասով Հայաստանը զիջում էր հարևան և ԵԱՏՄ երկրներին:

3. Բացահայտվել են ՀՀ-ում ներդրումային գրավչություն և ներդրումային ներուժ ունեցող ոլորտները՝ 4 մեթոդաբանությունների համադրման հիման վրա՝ փաստաթղթային վերլուծություն, պետական կառավարման համակարգում անցկացված սոցիոլոգիական հարցումներ, արտահանման բացահայտ համեմատական առավելություն ունեցող ոլորտների բացահայտում և ՕՈՒՆ կանոնակարգման սահմանափակման ինդեքսի համեմատական վերլուծություն:

4. Ատենախոսության արդյունքների գործնական և գիտական նշանակությունը

Ատենախոսությունում ստացվել են ինչպես տեսական, այնպես էլ կիրառական նշանակություն ունեցող դրույթներ: Ատենախոսության տեսական հիմնադրույթները կարող են կիրառվել այլ հետազոտողների կողմից, ինչպես նաև օգտագործվել ներդրումների ներգրավման առարկայական ծրագրում, իսկ կիրառական նշանակության դրույթների հասցեատերը հիմնականում ՀՀ կառավարությունն է: Մշակված գործիքակազմը կարող է նպաստել Հայաստանում վարվող ներդրումային քաղաքականության բարելավմանը:

Ատենախոսության հեղինակի կողմից հրապարակվել է 7 (յոթ) գիտական հոդված, որոնցում արտացոլված են հետազոտության հիմնադրույթները և գիտական նորույթը:

5. Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Այն շարադրված է 127 մեքենագիր էջի վրա՝ առանց հավելվածի, պարունակում է 36 գծապատկեր, 20 աղյուսակ:

Ներածությունում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Ներդրումների ներգրավման տեսական հիմնադրույթները» գլխում ներկայացվել են ներդրումների ներգրավման վերաբերյալ առաջատար տեսությունները, ինչպես նաև ներդրումների ներգրավման և ներդրումային դաշտի գրավչության վրա ազդող հիմնական գործոնները բացահայտող վերլուծությունները: Համաձայն Օքսֆորդի տնտեսական բառարանի՝ օտարերկրյա ուղղակի ներդրումը մի երկրի տնտեսվարող սուբյեկտների կողմից մեկ այլ երկրում ներդրում կատարելու գործողությունն է, որը հնարավորություն է տալիս տվյալ տնտեսական սուբյեկտին վերահսկողություն ունենալ այն ձեռնարկության գործունեությանը, որում կատարել է ներդրումը: Գրեթե նույն կերպ է սահմանում ՕՈՒՆ-ը նաև Արժույթի միջազգային հիմնադրամը՝ վճարային հաշվեկշռի կազմման մեթոդաբանության մեջ և ՏՀԶԿ-ն: Իսկ օտարերկրյա պորտֆելային ներդրումների պարագայում ներդրողը չի ստանում տվյալ կազմակերպության ակտիվների նկատմամբ ուղղակի սեփականություն:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ ներդրումների ներգրավման հիմնախնդիրները» գլխում հեղինակն ուսումնասիրել է ՀՀ-ում ՕՈՒՆ կառուցվածքը և հաշվարկել է ՕՈՒՆ ներհոսքի ազդեցությունը ՀՀ ՀՆԱ-ի վրա, ինչպես նաև

նախորդ գլխում առանձնացված 30 ցուցանիշների համախմբի հիման վրա համեմատական վերլուծության են ենթարկվել Հայաստանի, հարևան և ԵԱՏՄ երկրների ներդրումային միջավայրերը:

Ատենախոսության երրորդ՝ «Ներդրումների ներգրավման հնարավորությունները հետպատերազմյան Հայաստանում» գլխում բացահայտվել են ներդրումների համար նպաստավոր ոլորտները ՀՀ-ում, ինչպես նաև մշակվել են ներդրումների ներգրավման համար անհրաժեշտ ռազմավարական քայլեր:

«Եզրակացություն» բաժնում ներկայացվել են ատենախոսության հիմնական արդյունքները, եզրահանգումներն ու դրանցից բխող ատենախոսի առաջարկությունները:

6. Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ներկայացված ատենախոսությունը զերծ չէ թերություններից, որոնցից կցանկանայի նշել հետևյալները՝

1. Ատենախոսության 8-րդ էջում՝ «Ատենախոսության տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը» մասում, առաջին պարբերության վերջում նշված հեղինակներից գրեթե ոչ մեկը (բացառությամբ Լ.Սարգսյանի) ՀՀ-ում ներդրումների ներգրավման հիմնախնդրի մասին արժեքավոր աշխատություններ չի հրապարակել: Այդ հեղինակները պատշաճ ներկայացված չեն անգամ սույն ատենախոսության գրականության ցանկում: Այս պարագայում անընդունելի է տվյալ հեղինակների ներդրման մասին արձանագրումը աշխատանքի ներածությունում:

Ցանկալի է, որ հեղինակը նշեր մինչ օրս ներդրումների ներգրավման հիմնախնդրի վերաբերյալ գրված և պաշտպանած ատենախոսությունների մասին, արձանագրելով նաև որ դրանք իր կողմից ուսումնասիրվել են և չեն կրկնվում: Դրանով իսկ կհիմնավորվի սեփական աշխատանքի օրիգինալությունը: Այդպիսի ատենախոսություններ բազմաթիվ են, որոնց մասին կարելի է տեղեկանալ առնվազն ՀՀ ԲՈԿ-ի կայքից, մասնավորապես հետևյալ հղումներով՝ https://www.bok.am/node/9010 , https://www.bok.am/node/7138 , https://www.bok.am/node/10290 , https://www.bok.am/node/6961 , https://www.bok.am/node/6950 , https://www.bok.am/node/6625 , https://www.bok.am/node/5885 , https://www.bok.am/node/5015 , https://www.bok.am/node/3057 :

2. Ատենախոսության ենթագլուխ 2.1-ում «ՀՀ ՕՈՒՆ կառուցվածքը և ազդեցությունը ՀՆԱ-ի վրա» անհրաժեշտ է ներկայացնել էկոնոմետրիկ մոդելի

կառուցման համար ելքային տվյալներ ծառայած տեղեկատվությունը: ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազային հղումը, որն արտացոլվում է ընդհանրական տեսքով բավարար չէ, այն թույլ չի տալիս դիտարկել օգտագործված վիճակագրական շարքերի միտումները, ինչը հնարվորություն կտար համադրել դրանք մոդելի կիրառմամբ ստացված արդյունքների հետ: Ընդ որում, ատենախոսության տեքստը անհարկի չծանրաբեռնելու համար, վիճակագրական տվյալները կարող են ներկայացվել հավելվածի տեսքով:

3. Ատենախոսության ենթագլուխ 2.2-ում «ՀՀ ներդրումային միջավայրի համեմատական վերլուծությունը» գրեթե ամենուրեք (գծապատկերներ 2.2.2 - 2.2.30) անհրաժեշտ է ատենախոսության տեքստում, գծապատկերներից առաջ, հղումներ տալ բոլոր գծապատկերներին:

4. Ատենախոսության ենթագլուխ 3.1-ում «Ներդրումների համար նպաստավոր ոլորտները ՀՀ-ում» այդպիսի ոլորտների բացահայտման համար պետական մարմինների պատասխանատուների հարցման միջոցով երևույթի բացահայտումը միակողմանի է: Շատ հաճախ նրանք չեն կարող հանդիսանալ ոլորտի փորձագետներ, քանի որ (1) երևույթները դիտարկում են նեղ գերատեսչական դիտանկյունից, (2) տեղեկացված չեն, որ հենց իրենց մարմնի լիազորությունների շրջանակում ընդունված և գործող բազմաթիվ փաստաթղթերում (և պարտադիր չէ, որ դրա անունը լինի «ռազմավարություն»), իրավական ակտերում ամրագրված են դրույթներ, որոնց կատարումը անմիջապես ուղղված է ՀՀ-ում ներդրումների ներգրավման հիմնախնդրին, (3) տեղեկացված չեն տնտեսավարողների վարքագծի վերաբերյալ և չեն հետևում համաշխարհային տնտեսության փոփոխման միտումներին: Ուսումնասիրվող հիմնախնդիրներով ավելի մտահոգված են հենց տնտեսավարողները, առևտրային կազմակերպությունները, որոնց շրջանում հեղինակի կողմից հարցումներ չեն կատարվել:

5. Ատենախոսության հեղինակը չի անդրադարձել Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդի գործունեությանը և ներգրավվածությանը ՀՀ-ում ներդրումային միջավայրի բարելավման և երկրի ներդրումային գրավչության աստիճանի բարձրացման գործում: Մինչդեռ «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ-ն ՀՀ կառավարության կողմից ստեղծված ընկերություն է, որի գործունեությունը միտված է խոշորագույն ներդրողների և գործընկերների հետ համատեղ լայնածավալ նախագծերի իրականացմանը: Ընկերության նպատակն է լինել ակտիվ ներդրող և գործընկեր՝ խթանելով ներդրումները Հայաստանի տնտեսության կարևորագույն ոլորտներում:

Այդպիսի ուսումնասիրությունը ավելի ամբողջական կդարձներ ՀՀ-ում ներդրումային քաղաքականության պատկերը, խոշոր ծրագրերը և ոլորտները, որոնք դիտարկվում են որպես առաջնայիններ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված դիտողություններն ունեն խրախուսական բնույթ և չեն կարող բացասական ազդեցություն թողնել հետազոտության արդյունքների վրա: Արմինե Վարդանի Գևորգյանի ատենախոսությունն ունի տեսամեթոդական և գիտագործնական նշանակություն, ինքնուրույն հետազոտություն է, հեղինակը լուծել է ատենախոսությունում դրված խնդիրները:

Ատենախոսության հեղինակի կողմից հրապարակվել է 7 (յոթ) գիտական հոդված, որտեղ արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Արմինե Վարդանի Գևորգյանի «Ներդրումների ներգրավման հիմնախնդիրները հետպատերազմյան Հայաստանում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ ատենախոսության հեղինակն արժանի է Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Ա. Խ. ՄԱՐԿՈՍՅԱՆ**

Պարոն Ա.Խ.Մարկոսյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական քարտուղար **Ն. Հ. ԴԱՐԲԻՆՅԱՆ**

5 մայիսի 2023թ.